



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



Lkn

268

1999



ԼԲՔՈՒՆԻ ՎԵՌՕՒԵՊԵՏ

ՎՍԵՄԱՀՈՒՔ ԵՒ ՔՍԶԱՆՈՒՆ

ՊՕՂՈՍ ՊԵՅ ՏԱՏԵԱՆ ԱՄԻՐԱՅԻՆ
ԴԵՐՉԸ



ԳՈՍՏԱՆԴՆՈՒՊՕՒԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ

1864. ՌՅԵԳ



7268-60

28 277

Էս Պօղոս Տառեան . . . իմ ազգակից եղբօրներուս
 իմ ետքի Մնաք բարովս զրուցելու ատեն՝ այս իմ ետ-
 քի միտքս ու կամքս ալ յայտնելու չեմ դանդաղիր :
 Եսմանակս կարձ է, ժամերը վայրկեանները զիս դէտ
 ի յաւիտենականութիւն մղելու վրայ են. վայ ինձ,
 արդէն անգութ մահուան ստուերները զիս պաշարած՝
 մանգաղակիր հրեշտակին թեւերը վրաս բացուելու
 տարածուելու ատեն՝ աս ահաւոր ձայնը ականջիս հա-
 սաւ. Հրաման տուր տան քում, զի մեռանիս և ոչ
 ապրեսցիս : Ա՛հ, այն վաթսուէն ու վեց արեւներու
 եօթնպատիկ ճառագայթներով ոլորուած կենացս ու-
 կեցօժ թեղ անողորբի մկրատի մը բերնին տակ պիտի
 կտրուէր. իմ ծնողացս համբուրած հողը ես ալ հեզ
 մը պիտի համբուրէի, պարկեշտ ամուսնոյ մը, հնա-
 զանգ զաւակաց և սիրելի ազգականաց ու հաւատա-
 րիմ բարեկամաց արցունքը միայն հետս առած, իմ
 սիրելի ազգիս ողբերը ետեւէս ձգած . . . չէ, չէ, մի-
 այն իմ առաքինութիւններս՝ եթէ ունէի նէ՝ իմ հետս
 առած՝ գերեզմանին լռիկ ու ահաւոր անապատէն
 անցնելով՝ իմ Արարչիս առջին երեւնալու վրայ էի .
 դեռ երկինքի ու երկրի մէջտեղը կեցածի պէս՝ միտքս
 մտածութեանց ծովու մը և խորհրդածութեանց ամ-
 պերուն մէջտեղը կախուած մնացածի պէս՝ բողբոկ մը
 ձեռք մը կը փնառէի որ իմ տորտամ գիրքէս զիս ա-
 զատէ : Ա՛խ, արդեօք զիս իմ ծանրութեամբս պիտի
 ձգեն. ա՛խ, իմ անմահ միտքս՝ որուն Աստուծոյ պառ-
 կեր մը ըլլալուն կը հաւատամ, և նոյնը կը զգամ՝ նաև
 երկնից անսահման շրջանակներուն բարձրանալու և ու-

նանց հասնիլ ջանալու ատեն, անս, աս իմ միտքս իր
 անտրուշ դիրքին մէջ կ'իմանամ ու կը զգամ նաև որ
 կրնայ իջնալ ու իր երանացուցիչ և յագեցուցիչ վախ-
 ճանէն և տիեզերակալ հակէն հեռանալով՝ հոգի մը,
 աւազի մը, հիւշի մը մէջ ալ ամփոփիլ և դարձեալ
 իր վայրահասկ ճօճմանը մէջ յաւիտեանահասն մտատան
 ջութեան շարժմանը սկիզբ առնուլ, չէ չէ, քանի որ
 աստուածային Նախասնամութեան շնորհքով՝ դեռ
 յաւիտեանահասն թեան մը սահմանը չեմ անցած, քա-
 նի որ միտքս ու իողճմտանքս յաւիտեանահասն ալիքնե-
 քու մշտնջենտու որ կոճմանը չէ դատապարտուած, սէտք
 է որ իմ դործունեաց ինքնիշխանութեանս մըլում մը
 տամ, օգնութիւն մը մնառելու ատեն՝ ես ալ շարժ-
 ւիմ, դործակից բլլամ, դործեմ, ուղեմ, բաղձամ . . .
 այլ անտարբեր դիրք մը, անտարբեր վիճակ մը, ան-
 տարբեր զգածմունք մը չիկրնար իմ ձեռքդ սրտիս հետ
 միտքանիլ, որն որ միտքիս հետ ներգաղնակալութեան
 մը մէջ մանուշակ հարկը ամենէն աւելի հիմա կը դուս . . .

Նախասնամութեան որոշած կամ թոյլ ասուած
 ճամբուն վրայ քաշելով՝ որչափ որ երկրին գանձերը
 ասջևս բոց գոց նէ՝ նոյնչափ ալ աւելի երկիտային
 գանձերուն ծարաւեցոյ, որչափ որ սրտիս հասնար աչ-
 մէն բան հնազանդ ու պատրաստ գոց նէ՝ նոյնչափ
 ող չգոց մտքիս համար. մանաւանդ թէ ոչ սիրք
 արս ոչ հոգիս ոչ միտքս կրցոյ յագեցրնել. սնայ,
 մեծցոյ, ապրեցոյ, բոց ի նշգլես: Ըստ բան տեսոյ,
 շատ բան լսեցի, շատ բան զգացի, շատ բան իմացոյ,
 շատ բան սիրեցի, շատ բան մտածեցի, շատ բան ալ
 փորձեցի. բանէ, երջանկութիւնը ու նոյնու թեան
 հետ հիւսելու, ախարութիւնը դորութեան հետ միտ-
 ցրնելու, ծառայութիւնը տէրութեան հետ կապելու,
 մահը կենաց հետ հաշտեցրնելու ճիգ ու ջանքս ստորաց
 ու վայրապար եղած բլլալ տեսնելով՝ ալ հիմա հա-
 մուրեցոյ որ ես ալ խեղճ, տխար, մահկանացու ծա-
 ռայ մըն եմ եղեր. մանաւանդ թէ Նախասնամութեան

մէկ գործիքը, սէր էր որ հնազանդ և ընտիր ծառայ մը և օգտակար գործիք մը բլայի: Ահա Տէր մը զիս կը կանչէ: Հնազանդելու է, չէ՛ նէ չէ. հաս դարձեալ վախ մը կայ. կանչըւողներ շատ, բայց ընարուածները ո՞րչափ: Սակայն կանչըւողը երթալու է. երանի՛ Տիրոջ գայտղներուն. և Երանի որ ի Տէր ննջեցին: Ո՛ր Տէր իմ և Աստուած իմ, զիս քեզի կանչելու ատենդ՝ լոյս մը տուր աչացս, ճամբայ մը ցուցուր իմ քայլերուս, հաստատէ իմ ընթացքս որ չգայթակղիմ, պաշար ալ տուր որ ճամբուս վրայ չկնամ՝ չմնամ և ճամբաս կատարեմ: Երթալու եմ անցածն ու ներկայն հետս աւուած. ծանր բեռ և զրեթէ անասնելի. բայց արդեօք կրնամ՝ ներկային ձեռօք անցեալը հաւասարակչուութեան մէջ բռնել: Մինչև հիմա ես տարբեր կը մտածէի ու տարբեր կ'ապրէի. միայն ներկային ձեռօք անցեալը բեռնաւորելու հետ էի. բայց հիմա կը տեսնեմ՝ որ կեանքը ոչ անցեալին ոչ ալ ներկային մէջն է, հաւսրս ապագային, ներկան ապագային ծառայեցընելու է եզեր. ալ հիմա իմ աչքիս առջին անցեալը անօգուտ ու ներկան սցինչ կ'երեւայ. միայն ապագան ճշմարիտ ու իրական կը համարիմ. ան միայն միաբխ հետ կրնայ միաբանիլ և հսն միայն սիրաս կենդրան մը կրնայ գտնել: Ան Ապագայ, ահա ՄԱՅԸ մէկ ձեռքով աչքերս գոցելով պատմութիւնս դողրեցընելու ու տենն՝ մէկալ ձեռքով զիս քու անցատակ անդունդիդ մէջ կը մղէ, ուր բնաւ որսամութիւն չկայ: Բայց այն անդունդին տակալէ եզերքներուն վրայ խնձի վայրկեան մը տպմանաժամ կը արուի՝ որ մինչև որ այն եզերքն ներուն շրջանը դառնամ բնիցընեմ՝ նե՛ գտնէ իմ յղուցածներուս ծնունդ մը տամ, կրտակ մը շինեմ և իմ եղբարցս ձգեմ:

Այն, սիրելի եղբարք իմ, կեանքս խնձի շատ բան սորվեցուց, բայց մահը ալ աւելի բան կը սորվեցընէ. ս' բարերար մահ, քու առջի բարիքդ ան է որ զիս ինձի տէր կ'ընես: Այս մահուան անկողնին մէջ կը դգամ

որ ալ զիս կապող կաշկանդող շղթաները մեկիկ մեկիկ վրայէս կը վերնան, երթալով կը թեթեւնամ, ժամէ ժամ աւելի ազատ կ'ըլլամ ու վայրկեանէ վայրկեան երջանիկ կ'ըլլամ: Չայ ինձ, այն մարմինն ու արիւնը կենացս ընթացքին մէջ զիս խիստ շատ ծանրացուցեր է, կը սիրէի հոգիս, բայց ազգս աւելի կը սիրեմ եղեր, կը սիրէի ճշմարտութիւնը, բայց մարդկայնութիւնը աւելի կը սիրեմ եղեր, կը սիրէի յաւիտենականութիւնը, բայց ժամանակը աւելի կը սիրեմ եղեր. վերջապէս միտքս ու հոգիս իրենց ազատ թռիչք չեն կրցեր ունենալ: Ասկայն մասը՝ այն ճշմարտախօս պատգամաբերը, այն անկեղծ բարեկամը, այն ամէն բան սորվեցընող վարպետը՝ զիս ճշմարիտ փիլիսոփայ մը կ'ընէ, շնորհակալ եմ Քարծրելոյն խնամքին՝ որ այն մասը աւուրցր դատաւորի, կամ անդու թոսիսի, կամ անազրով դահճի մը պէս չիզար չ'երեւնար ինձի, հապա երկնառար պատգամաւորի մը, մխիթարիչ բարեկամի մը, քաջալերիչ վարդապետի մը պէս ինձի կը մօտենայ, Չէ, դժնեայ մատերով աչքներս գոցելու համար չէ մօտեցած ինձի, հապա վարդէ մատերով աչքներս բանալու համար եկեր հասեր է, չէ, ահաւոր ու սուկայի, աղի և դառնադառն ալիքներու մէջ սիրտս ընկըղմելու և խղզելու համար չէ մօտեցած, հապա խաղաղ ու անաչ գեփիւսներով զիս զմայլեցընելու համար. չէ, նորանոր բեռերով զիս ծանրացընելու համար չէ մօտեցած, հապա տաղտկալի ծանրութիւններէս զիս ազրտտելու համար. վերջապէս չէ, մթին ու տարսամ անկերու մէջ միտքս յափշտակելու համար չէ մօտեցած, հապա լուսաւոր ու լուսալից ճառագայթներու մէջ զիս յափշտակելու համար: Ահա միտքս ու խղճմտանքս՝ այս նաւակոճեալ Եւր՝ երկայն ստուն հողմակոճեալ չիչիտ տախտակի մը պըլլուած դահազան ալեաց խաղաղիկ ըլլալէն ետև՝ իր խաղաղութեան ու անդորրութեան հորիզոնը նշմարելու կը սկըսի, թանձրախիտ անբեւաճ մայրիներուն ետևէն

սրբազան սրբաբան մը ճառագայթներուն նման՝ շնորհաց արեւուն նշոյլներն ալ աչքիս մացառները թափանցելով սրտիս դուռներուն կը բաբախեն :

Հիմա պէտք է որ այն բարերար շնորհքներուն առջին գլուխ ծռելու ատեն՝ սիրտս ալ բանամ ու պարզեմ բարերար մահուան մը փրկարար ազդեցութեանցը առջին, որոնք տկարը կը զօրացնեն, հոգեզէնը հոգեզէն կ'ընեն : Ո՛ր բարերար և փրկարար շնորհք՝ որ զեղեգն ջախջախեալ մի բեկոյէ և դպատրոյգն առկայծեալ մի շիջուսցէ, անիս, ինչպէս զքեզ չգրկեմ ու քեզի չփաթթուիմ, որ ինծի պէս ջախջախած եղեգի մը ու առկայծեալ պատրոյգի մը կ'ըսես, Զօրացիր ու քաջ լեր, ասիկա ինծի բաւական է : Ահա կը զօրանամ, հոգէն վեր կ'ելլեմ, աներեւոյթ հուր մը բոց մը սիրտս կը բորբոքէ, հրեշտակային բազուկ մը զիս պրահով կը պատէ, ճշմարիտ բարեկամ մը ինծի սուր մը կու տայ, անկեղծ վարպետ մը ինծի վահան մը կը մատուցանէ, աստուածային պատգամաբեր մը գլխուս վրայ սաղաւարտ մը կը գնէ : Ուրեմն ինծի դէմ ո՞վ կրնայ ելլել, ո՞վ կրնայ զիս յաղթել, ո՞վ է որ զիս կապելու կաշկանդելու կը յանդգնի, և ո՞վ է որ զիս գերելու կը մտաբերէ, նոյն իսկ մահէն ալ չեմ վախնար, ալ ասկէ ետեւ անիկա ինծի կեանք մըն է, երբ շնորհքը զիս կը յաղթէ ու կը գերէ և Քրիստոսի գրօշին տակ կը նուաճէ, ալ ասկէ ետեւ իբրև քաջ զինուոր Քրիստոսի աներկիւղ և անվեհեր կը խոստովանիմ իմ միտքս, իմ կամքս, իմ սէրս, կը խոստովանիմ բովանդակ եղբարցս ու ազգիս առջին թէ կը բաղձամ, կ'ուզեմ, ու կ'երգնում ասկէ ետեւ իմ Աստուածս իզմէ ու ամէն բանէն աւելի սիրելու, կ'ուզեմ ու կ'երգնում հոգիս մարմինէս աւելի սիրելու, կ'երգնում իմ գիտակցութիւնս իմ խիղճս ազգէս աւելի սիրելու, երբ յաւիտենականը ժամանակաւորէն աւելի սիրելու պարտքն ու հարկը այնչափ աւելի կը զգամ՝ որչափ մահուան կը մօտենամ, որչափ անաշառ Դատաւորի

մը առ ջին երեւնալու ու շտայրնող վայրկէ անները կը թըւ-
ջին, որչափ հոգւոյս մարմինը թող տալու ատենը կը
մտակնայ, և վերջապէս որչափ որ իմ եղբայրներէս իմ
աղբէս հրամարելու և բաժնուելու անդարձ վճիւր
ականջն հնչելու վրայ է:

Մարդկային ունայնու թիւն, մարդկային ակնածու-
թիւն, մարդկային նկատմանք, մարդկային շահ,
մարդկային սէր, և ինչ որ մարդկային է նէ՝ ալ իմ
վրաս իշխանութիւն չունի, ազատ եմ ազատ, և ա-
զատութեամբ կ'ուզեմ որ սիրածս գրկեմ. . . Այո,
ուր ե՛ն ան թեւերը. ուր ե՛ն այն թեւերը՝ որոնք կրը-
նան զիս առնուլ ու այնպիսի սխնեան լերան մը ծայ-
րը թուցնել՝ որն որ ամպերէն վեր է, ուր մշուշ մա-
րսխուղ չկայ, ուր հողմ ու մրրիկ չխախտէր, ուր
տաքտամ սգիներ չէն տեսնուիր, ուր անտարբեր վի-
ճակները կը գողցին ու անգորբութիւնն ու խաղա-
զութիւնը կը փրկէ, ուր աստուածային շունչը կը փը-
ջէ և ուր Աստուծոյ հոգին կը սաւառնէ. . . ասհետս
դեռ աս լերան տօքոտան եմ. . . ե՛մ արդեօք. . . :
Բարէ, եղբայր իմ սիրելիք, երկոյն կեանքի մը խո-
տորնակ շաւղին ճոթը հասնելու ատենս՝ սհ, ի՛նչպէս
կրնամ յուսալ որ ճշմարիտ նպատակիս դեռ կրնամ
հասնիլ, որչափ հեռու է իմ սկզբնակէտս, որչափ եր-
կայն է իմ շրջանս, ի՛նչպէս կրնամ ետ դառնալ և
նորէն շիտակ ճամբան գտնել. կրկին կեանք մ'ալ պէտք
է ինձի, սհ, սհ, չկայ Եսայի մըն ալ որ ինձի գոնէ
տաննու հինգ տարի մըն ալ խոստանայ, բայց ուր է
ան Եղեկիան, գիտեմ, գիտեմ, ինձի համար սլարե-
ու ժամացուցին շուրջ տասը աստիճան ետ դառնալիք
չունի. առջեւ յաւիտենական անգուճգ մը կը տես-
նեմ, հոն աներեկոյթ ձեռք մը զիս կը մղէ. յաւիտե-
նականութիւնն ալ իր ծոցը բացած զիս կը հրաւիրէ՝
իր անփոփոխելի վիճակները ինձի յուցնելով. . . :

Սակայն աս ալ ճշմարիտ է որ ներկայ աշխարհքը
ապագայ աշխարհքին հետ կապող Աստուծոյ մը առ-

Յին ժամանակ չկայ, վայրկեան մ'ալ յաւխտենալանու-
թիւն մ'ալ մէկ է իր անսահմանութեանը առջին :
Եթէ Աստուած զիս կը սիրէ նե՛ վայրկեան մ'ալ,
մանրերկրորդ մ'ալ ինծի բաւական է . և արգէն
կեանքս ինծի համար վայրկեան մըն է , և ան վայր-
կեանն ալ ինծի համար կեանք մըն է : Քայց , բռէք
ինծի , զիս սիրող բարեկամք , բռէք ինծի . հիմա այս
վայրկեանը կրնայ անտարբեր վայրկեան մը ըլլալ . ես
ալ կրնամ վայրկեան մը անտարբեր մնալ . եթէ նոյն
վայրկեանը արարչագործութեան եօթը վայրկեաննե-
րէն կամ օրերէն մէկուն չափ ալ երկայն մտածելու
ըլլաք , դարձեալ ակնթարթ մը չեմ կրնար ես ինք զինքս
ուրանալ . իմ Եսս ինծի դատաւոր մըն է , որն որ իր
կապերէն ազատածին պէս՝ անմիջապէս դատս կ'որոշէ ,
վճիռս կու տայ և ինքնիշխան ազատութեամբս ալ կը
բանադատէ զիս որ իրեն հետ հաշտուիմ ու միաբա-
նիմ : Արդգամ նաև որ ասգի ի ու անգի ի աշխարհք-
ներուն եզերքին վայ թափառելու ատենս՝ միայն
վայրկեան մը ազատ , վայրկեան մը ինքնիշխան , վայր-
կեան մը դատաւոր , վայրկեան մը իրաւքնտիր եմ . ա-
յո՛ այն , յաւխտենալանութեան անփոփոխելի վայր-
կեաններուն անցնելու ատենս՝ վայրկեան մը միայն
ներեւած է ինծի սիրածս գրկելու և գրկածս սիրելու ,
սիրածիս յուսալու և յուսացածս սիրելու , սիրածիս
ու յուսացածիս հաւտալու , և հաւտացածս յուսա-
լու և սիրելու :

Այս , ճշմարտութիւն և միակ ճշմարտութիւն և
նախանձայող ճշմարտութիւն , գիտեմ , գիտեմ , այս
վայրկենիս զոհը իզմէ կը սրահանջես , իրաւունք ու-
նիս . այս վայրկեանս քեզի զոհած եմ , քեզի չզոհեմ
որո՞ն զոհեմ , բու հակառակորդիդ , որ է Աստութիւն .
չէ , չէ , սրտիս պաշտելի առարկան դուն ես միայն ,
և սիրտս ալ բովանգակ բուկդ է , և քեզմով միայն
կրնայ յագենալ . դուն արգէն իմ գլխուս չորս գին
կենացս երեւուն հետ կը դառնայիր . բայց եղբւր ինձ .

մի միայն ցաւս ան է որ զքեզ ուշ սիրելու կը սկը-
 սիմ, երբ դուն զիս ի յաւիտենից կը սիրես եզեր,
 արդեօք աս յաւիտենական սիրոյն փոխարէն՝ զքեզ
 ասկէ ետեւ յաւիտեան սիրելու ըլլամ նե՛ կրնամ հա-
 տուցում մը ընել. . . : Ասոր ալ կը հաւատամ, ինչ-
 պէս որ կը յուսամ թէ իմ Ամենակալ Հօրս հետ կըր-
 նամ հաշտուիլ՝ անոր Արդւոյն մեր Միջնորդին ձեռօքը
 և երկուքէն բխող Հոգւոյն շնորհքովը, որն որ առա-
 քելոց լեզուներ տալու ատեն՝ ինծի ալ լեզու մը կու-
 տայ որ խոստովանիմ ու քարոզեմ աներկիւզ ու բար-
 ձրաձոյն թէ էս ալ քրիստոնեայ մըն եմ և ոյն երեք
 հազար քրիստոնեաներէն կ'ուզեմ ըլլալ՝ որոնք Պետ-
 րոսին առջի քարոզութեամբը Քրիստոսի հաւտացին,
 որն որ ճշմարտութիւն էր՝ մեր հաւատքը առնելու
 համար, ճանապարհ էր՝ մեր յոյսը տանելու համար,
 Պեանք էր՝ մեր սէրը առնելու տանելու համար : Ահա
 այս հետզհետէ հաւատով, յուսով ու սիրով աճող
 առաքելական տեսանելի ժողովքին կամ եկեղեցւոյն
 անդամ ըլլալ ուղելով, նոյն դարձեալ բարոյականօրէն
 սուրբ, տրամաբանօրէն մի, որատմաբանօրէն ընդհա-
 նուր, աստուածաբանօրէն անսխալ ու երանականօրէն
 հարկաւոր եկեղեցւոյն անդամ կ'ուզեմ ըլլալ, որուն
 լեզուով, գործքով, սրտով, հոգւով ու մտքով պէտք
 եմ՝ ծառայել :

Սակայն արդեօք նոյն եկեղեցին մինչև հիմա կը շա-
 րունահուի՞ կոր. ո՞ւր է այն ժողովքը կամ եկեղեցին,
 և ես արդեօք նոյն եկեղեցւոյն մեջն եմ, անոր հետ
 հազօրդութիւն ունիմ. որոնք են նոյն Քրիստոսի Տեառն
 մերոյ հետ անընդհատ հաղորդուող եկեղեցւոյն ան-
 դամները, և ես արդեօք նոյն ճշմարիտ եկեղեցւոյն
 անդամ եմ և ինք զիս կը ճաննայ : Ա՞յլ չուզեր ո՞վ չե-
 բաղձար այս եկեղեցւոյն անդամ ըլլալ, որմէ դուրս
 փրկութիւն չկայ, որովհետեւ անկէ զտու ուրիշ տեղ
 Քրիստոս չկայ, ուստի և Միջնորդ չկայ ինկած մար-
 դուն, և երկրորդ Ագամ մը ուրանալով՝ ո՞վ է որ առ-

Ջի Ադամն ալ կ'ուրանայ, և տարակոյս չկայ որ մարդկային խանգարումը չտեսնողը մարդուս մեծութիւնն ալ չիկրնար տեսնել, ուստի և հոգի վրայ սողալու կը ստիպուի, և անշուշտ ոտքի տակ ալ ճզմուելու արժանի է: Այն ինձ, ինչպիսի խորութեան մէջ ինկանք: Չկենանք չկենանք հոս, դարձեալ վեր ելլելու նայինք, և միտքն ալ բանաւորութիւնն ալ կը ստիպէ զմեզ որ մեր բազմանքը շարունակենք և վերցոյնելու եկեղեցւոյն միջնորդութեամբը երկինքը բռնագատենք:

Հոս դարձեալ ուրիշ տեսարաններու կը հանդիպինք. այն քրիստոսեան եկեղեցին երկրիս վրայ իր պատերազմը լմրնցընելով՝ ամբողջապէս դեռ երկինք չիտխադրուած՝ կը ձեղքուի, կը բաժնուի, միութիւնը բազմութեան կը փոխուի, և այլն: Ո՞վ չիգիտեր որ այն մի միայն ճշմարիտ եկեղեցւոյ որդիքներէն ոմանք միութենէ կամ միութեան կենդրոնէն բաժնուելով՝ ճշմարիտ եկեղեցւոյ անդամ ըլլալէն ալ դադրած են. ո՞վ չիգիտեր դարձեալ որ ասոնք ճշմարիտ եկեղեցւոյն արուած նշանակները (տեսանելի, ընդհանուր կամ կաթողիկէ, մի, առաքելական, սուրբ, անխալ և հարկաւոր) կամ հանգանակը վրանին ամբողջ ու անարատ չեն պահած ու դաւանած, և ասով զանազան ինքնագլուխ խումբեր կամ եկեղեցիներ ձեւացեր են: Ահա աչքիս առջին կուգան շատ եկեղեցիներ, շատ դաւանանքներ, շատ հանգանակներ, շատ վարդապետութիւններ. արդեօք ասոնք ամէնն ալ անխորութեամբ կրնամ գրկել կամ թող տալ որ զիս գրկեն ու իրար ողջադուրենք. արդեօք ասոնք ամէնն ալ զմեզ անխտիր քրիստոսի կը տանին կը հասցընեն՝ երբ ճշմարիտ քրիստոսութեան նշանակները հաւասարապէս չեն ցուցըներ, և մանաւանդ թէ այն նշանակները չի ցուցընելէն զատ՝ անոնց հակառակները վրանին կը նշմարեմ. խեղճ քրիստոսեայք, սրչտի ողբալի և յաւիտենական ողբոց արժանի էք՝ երբ երկնաւոր Փեսային գիմելու ատեննիզ անանկ առաջնորդներ ձեզի

կ'ընտրէք և այնպիսի հազուստներ վրանիդ կ'առնուք, որոնց համար կրնայ փեսան ըսել որ Զաննիք չեմ ճանչնար, Ասոնք հարսանեաց հազուստ չեն: Սոսկալի՛ք ընդունելու թիւն, յուսահատական մերժում. . . :

Ահա, եղբարք իմ սիրելիք, ահա ոսկրներս կը սարսին, մարմինս փուշ փուշ կ'ըլլայ, սիրտս դառն այլքներու մէջ կը խռովի կը յուզի, և ամենէն աւելի միտքս, անմահ միտքս կ'այլալի, որն որ իր անմահութիւնը յաւիտենականութեան հետ միացընելու առեն՝ յաւիտենական երջանկութեան ու յաւիտենական թշուառութեան երկուորեակ գաղափարը կը յըզանայ. ի՛նչ կուլ, ի՛նչպիսի հակառակութիւն. կարծես թէ երկինքը երկիրս հետ կը կռուի, լյսը խաւարին հետ, ճշմարտութիւնը ստութեան հետ կը ստերաղմի: Ո՛վ չխիբեր ճշմարտութիւնը, ո՞վ չխիբեր լյսը, ո՞վ չխիբեր երկինքը. սակայն երկիր, մարմին ու մարդիկ՝ իրենց առանձին հրապարներն ունին, իրենց կողմը բազմաթիւ կողմնակիցներ ստացած են. . . :

Իայց ես բաւական կռուեցայ, հերկք ճգնեցայ, կենացս ընթացքին մէջ շատ կողմնակիցներու կողմնակցեցայ, շատ տարակուսեցայ, շատ տատամսեցայ, այնչափ սխալեցայ որչափ անխտիր ու անտարբեր ամպերու վերացայ, որոնք խտանալով ու թանձրանալով կրնային զիս իրենց հետ մեկտեղ մինչուկ անհաւատութեան անդունդներուն մէջ գահալիծել՝ եթէ գթութեան արև մը նոյն ամպերը ցրուելու չըլլար: Եւ հիմա՝ ինչպէս որ ըսի՝ սը մարդիկ ինձի համար չեն, մարմինը զիս կը թողու, ես ալ երկիրը կը թողում. ճշմարտութիւնը մերկ կը տեսնեմ, լյսը յայտնի ու անաղօտ կը նշմարեմ, երկինքը բաց կը գիտեմ: Ա՛լ այսուհետև ճշմարտութիւնը միայն ճշմարտութեան կրնամ զոհել, այսինքն միայն Աստուծոյ Հօր Բարձրելոյն, չէ թէ կայր եսին. սը այսուհետև կեանքս միայն կեանքին կրնամ զոհել, այսինքն Քրիստոսի Տեսուն մերայ, չէ թէ ապերախս մարդկան, սը այսու

հետև լայն միայն լուսոյ կրնամ զոհել, այսինքն Հոգւոյն Սրբոյ, չէ թէ ունայնութեանց կուռքին :

Ըստնց առաջնորդողը իմ միտքս է, որն որ երբեմն մոլորական ասողի մը պէս՝ իր շրջանէն դուրս ելած ժամանակ մը այլեայլ միջնորդաներու մէջ թափառելէն ետև՝ դարձեալ արեւուն աղբեցութեան տակ մտնելով իր օրինաւոր շրջանը կառարելու կը սկսի, այսպէս միտքս ինք իրեն գալով, իր կենդրոնը գտնելով՝ գիտակից ըլլալով որ հոգւոյս փրկութեանը պատասխանատուն ինքն է՝ կը փնտռէ կը գտնէ որ իր Փրկչին, իր Աստուծոյն և իր Երանութեանը տանող ամենապահօժ ճամբան, և բուն քրիստոսեան մի միայն փրկարար եկեղեցւոյն նշանակները ամբողջ, անարատ և ամենակատարեալ եղանակաւ միայն ՀՌՈՄԷԱԿՅԵ կաթողիկէ եկեղեցւոյն մէջն են. որովհետև աս ուրաշտողը զՔրիստոս ալ ուրանալու է, ինչու որ եթէ Քրիստոս աս եկեղեցւոյս մէջն ալ չէ նէ՝ բնաւ տեղ մը չէ, եթէ ասոր գլուխը չէ նէ՝ բնաւ աշխարհք չէ եկած, եթէ հոս փրկութիւն չկայ նէ՝ բնաւ Քրիստոս չկայ, եթէ հոս ալ պատրանք մը կայ նէ՝ բնաւ Նախախնամութիւն չկայ, եթէ աս ալ կ'ոչնչանայ նէ՝ բնաւ Աստուած չկայ : Ուրեմն երբ կը հաւատամ Աստուծոյ, կը յուսամ Քրիստոսի, և կը սիրեմ Նախախնամութիւնը, պէտք է որ անոնց Հոգւով Սրբով յառաջ բերած արդիւնքն ու հաստատած շէնքն ալ սիրեմ, յարգեմ ու պաշտեմ, այն շէնքը՝ որն որ իր մէջը աշխարհքիս ամենամեծ հանձարները պարունակելու առեն՝ ամենամեծ կարծուած յարձակմանց դէմ ալ անյաղթահարելի տեսնուած է, որն որ ամենամեծ մտայ և միանգամայն ամենամեծ սրտից յարմար հասնատութիւն մըն է, որն որ յաւիտենականութիւնն ու անմահութիւնը անձնաւորածի պէս կ'երեւայ, և որն որ վերջապէս իր վերայիչեալ նշանակներովը մէկ տեղ աստուածային նկարագիր մը ունի :

Ալ տարակուսելու կամ մոլորութեան տեղ չկայ :



եղբարք իմ սիրելի, երկրի, մարմնաց ու մարդկանց իմ հրաժարականս տալու ատեն՝ պէտք է որ հրաժարիմ ամէն հերձեալ եկեղեցիներէ, հրաժարիմ մասնաւոր եկեղեցիներէ, հրաժարիմ փոփոխական եկեղեցիներէ, հրաժարիմ անտարբեր եկեղեցիներէ, հրաժարիմ անյարկիւր կամ տարտամ եկեղեցիներէ, հրաժարիմ թոյլ կամ նուազ բարոյական եկեղեցիներէ, որոնք ամէնն ալ ինձի մէյմէկ Բանթէն մը կ'երեւան՝ որուն մէջ Քրիստոսի արձանն ալ կը գտնուի, բայց ինք (Քրիստոս) չի գտնուիր, վերջապէս պէտք է որ ամէն եկեղեցիներէ հրաժարիմ ու զանոնք հերքեմ և մի միայն ճշմարիտ կաթողիկէ հոռմական եկեղեցւոյն զիրկը խնամ, ուխտիւ և երդմամբ իմ հաւատարմութիւնս հաստատեմ. ախ ի՛նչպէս չվաթթուիմ ան եկեղեցւոյն՝ որն որ իմ մարմինս հող իջնալու ատեն թող չիտար որ հոգիս ալ իջնայ, աս է աս իմ վնասաւորս, ասիկա իր հաստատուն վարդապետութեամբը միտքս կը համոզէ, իր Պնխիտիս սկզբունքովը սիրտս կը հանգարտեցնէ, իր լուսաւոր օրէնքովը հոգիս կը լեցնէ: Յաւիտենականութեան դրան մտանցող հոգիս՝ միայն յաւիտենական քաղբի մը դռնէն անցնելով կրնայ իր նպատակին հասնիլ: Այս դրան առաջատար բացուածին պէս ինք զինքս Աստուծոյ գիրկը կը գտնեմ. . . : Շնորհակալ եմ Աստուծոյ ամենագութ հայրախնամ ողորմութեանը՝ որ ինձի բարեգութ մայր մըն ալ կը ցուցնէ, որն որ հոգիս ու մարմինս երջանիկ կ'ընէ: Աս աստուածային մօր կը յանձնեմ զիս բոլոր մտքով հոգւով ու մարմնով, աստը՝ որն որ ինձի անյողգողգ քաղուկ մը կ'երկրնցնէ, իր մեծութեամբը վեհ ալ է, իր վեհութեամբը մեծանձն ալ է, իր մեծանձնութեամբը գթած ալ է և իր գթութեամբը առատաձեռն ալ է:

Այն անցուցած կեանքիս ազմկալից մրրիկներուն և գալի գերեզմանին ահաւոր լութեանը մէջ առկախեալ հոգիս նաւահանգստի մը և մտիթարու-

Թեան ձայնի մը կարօտ է . կարօտ եմ ծարաւի եղջերու
ուի մը պէս՝ յորդառատ աղբիւրի մը զովացուցիչ ու
կենդանի ջուրերուն . կարօտ եմ բազմամեայ կաշնաւ
ւորի մը պէս՝ արձակող ձեռքի մը բարերար շնորհքին .
կարօտ եմ քարերու տակ ընկճած ու մթու թեան մէջ
մնացած բոյսի մը պէս՝ երկնային արեւու մը բազմա
բեղուն ճառագայթներուն . կարօտ եմ վերջապէս մու
րրած ոչխարի մը պէս՝ քաջ հովուի մը առաջնորդու
թեան : Պատրաստ է սիրտ իմ, պատրաստ է :

Ո՛ր մի միայն ճշմարիտ եկեղեցի , ո՛ր մի միայն փրկա
բար ծոց մայրենի , ընդունէ՛ անդէ , երկու հարիւր մի
լիոն ներկայ զաւկըներով պաշարուած միսիթարուելու
ատենդ , և գուցէ ասկէ աւելի անցեալ ու ներկայ դիւ
ցազներով ու նահատակներով , սուրբերով ու սրբու
հիներով պատկուած պարծելու ատենդ , և սատուքիւ
ասկէ շատ աւելի բարեյիշատակ երանացեալ հոգիներ
ով յաղթանակած բերկրութեամբ խայտալու ատենդ ,
անդէ մի մերժեր ընդունէ՛ նոր զաւկի մը հառաչանք
ները իր սրտին հետ մէկտեղ , որն որ իր ծնողացը ար
գիտութեամբը և իր յանցուէր վախկատութեամբը
կամ տարտամութեամբը մինչև հիմա ուշացուցեր է
իր սէրը այն կենդրոնին ուղղելու՝ որն որ աստ և ի
հանդերձեւումն գրբիտանեայս երջանիկ ընելու հա
մար հաստատուած է քրիստոնէութեան աստուածա
յին Հիմնադրին ձեռօք , որն որ իր շէնքին աներեւ
ւայթ քարը ինք եղած ատեն՝ երեւելի վէմը՝ Պետրոսն
ու անոր յաջորդները՝ տյսինքն Հռոմայ Սրբազան Քա
հանայապետները ցուցուցած է մեզի : Ո՛ր մի միայն ,
անսխալ , սուրբ , և մայր եկեղեցի , քու պատուեր
ներդ , քու օրէնքներդ , քու սահմանադրութիւններդ ,
քու խորհուրդներդ , քու աղօթներդ իմ որդիական
սրտիս սիրելի , պաշտելի ու յափշտակիչ առարկաներն
են ու միշտ պիտի ըլլան : Ո՛հ , ի՛նչպէս կրնամ չսիրել
դքեզ կամ վայրկեան մը տարակուսիլ քեզի հնազան
դելու՝ որ զիս քու ամէն նշաններովդ ուղղակի և ան

հըրսածեշտ քրիստոսի Տեառն մերոյ կը հասցընես :
 Ղերցնւր , ս քրիստոնեայ , վերցնւր վայրկեան մը այն
 սեւորստեան վէժը , այն քրիստոնեութեան դրական
 կենդրոնը (անկարելի թէ ու թեամբ) , ահա բովանդակ
 քրիստոնէութիւնը իր բովանդակ յաղթ զանդուած ոյն
 ալ չի կրնար դէմ դնել անհաւատութեան կամ անկրօ-
 նութեան կամ անտարբերութեան կամ նիւթականութեան
 թեան ուրացական զօրութեանը : Այն ինձ , ի՛նչ ա-
 լերներ , ի՛նչ կորուստներ , ի՛նչ դատապարտութիւն-
 ներ աչքիս առջին կու գան . . . :

Վ ճիւղը տրուած է , պէտք է որ մեռնիմ , բայց
 կ'ուզեմ այն եկեղեցւոյն մէջ ու այն եկեղեցւոյն հա-
 լատարովը մեռնիլ՝ որմէ դուրս ալ ինձի համար փր-
 կութիւն չկայ , ես որ մէյ՛ը էջմիածնատկան եկեղեցւոյն
 վրայ տարակուսելու ուժն ունեցայ և մէյ՛մ'ալ հառ-
 մէական եկեղեցին տեսնելու և ճանչնալու լոյսը և սի-
 բելու շնորհքը ունեցայ : Երանի՛ թէ ամէ՛ն եղբարքս
 ալ տեսնէին ու ճանչնային . բայց ի՛նչ օգուտ միայն
 տեսնելն ու ճանչնալը առանց սիրելու . ահա դատա-
 պարտութեան դուռ մը՝ որն որ այսպէս գիտութեամբ
 և յամառութեամբ մի միայն փրկարար եկեղեցիէն
 դուրս մնացողներուն համար կը բացուի . ս զարհու-
 րելի գիտակցութիւն , ս անշիջանելի խղճմտանք . . . :

Որդիք Հայաստանի , դուք ալ ինձի պէս մահա-
 նացու չէք մի . ի՛նչ , արդեօք դուք ալ օր մը հող իջ-
 նալու չէք . ամէն մէկերնիդ ինձի պէս օր մը մահւան
 անկողնին մէջ պառկելու չէ՞ , երկրէն , մարմնէն ,
 մարդիկներէն , մինչև սիրելիներէն թողւած լքուած :
 Անտարակոյս , անտարակոյս : Արդ այն փափուկ վայր-
 կենին մէջ ի՛նչ ու ի՛նչպէս պիտի մտածէք ու դա-
 տէք . . . վայ կը սորոգը աչքը գոցած բռնողին . . .
 ս՛հ , ձեզի համար այն վայրկեանը անտարբեր վայրկեան
 մըն է , այն անցումը անտարբեր անցում մը կ'երեւայ .
 դարձեալ կ'ըսեմ վայ , վայ տարտամ հոգիներուն ,
 աւելի վայ տարակուսող միտքերուն , ալ աւելի վայ

յուսահատ սիրտերուն . . . Չէ՛, եղբարք իմ չէ՛, դուք
 գոնէ մի ուշացրնէք ձեր սերը, ա՛յ անգիտութեամբ
 չէք կրնար արդարանալ, փախտտեամբ ալ չէք կրնար
 ապրիլ, երբ խաւարասէր ոսոխ մը կռնակնիկ դարան-
 ներ դրած որսգայթներ լարած պատրաստուած կեցած
 է. զգուշացէք, զգուշացէք: Լուսաւորչական ենք կը-
 սէք, արդեօք ճշմարիտ լուսաւորչակա՛ն էք: Լուսա-
 ւորիչ ջահին ետեւէ՞ն կ'երթաք, չէ՛ նէ առջեւէն:
 Չէ՛, չէ՛, ա՛յ բուսական լուսաւորեցաք, բուսական տե-
 սաք, բուսական ճանչցաք մի միայն սիրելին, որն որ
 աստուածային հարսի մը պէս զձեզ երջանկացրնելու
 համար միշտ կուրծքն ու թեւերը բաց կեցած է ու
 կը սպասէ: Գիտե՛մ, գիտե՛մ այն զձեզ զմայլեցրնող
 յուշկապարիկները, որոնք երբեմն զիս ալ կապեցին .
 անշուշտ աս կապերն ու կապանքները մահւան մատե-
 րէն անխնայաբար տխրի քակուին, բայց ո՛ւր էր որ
 մահւան յիշատակովը մենք մեր մատերովը անոնք լու-
 ծէինք. այո՛, կը խոստովանիմ իմ տկարութիւնս որ ե-
 թէ մահ չըլլար նե՛ գուցէ բնաւ չէի կրնար այն սամ-
 սոնեան ուժը ստանալ իմ խիստ կապերս թօթուելու
 և այն ահաւոր շղթաներս խորտակելու համար. թէ-
 պէտ հիմա իմ միտի սիրելւոյս հետ այնպէս կապուած
 եմ՝ որ և ոչ կեանք և ոչ մահ կրնայ զիս անկէ բաժ-
 նել: Ո՛ կեանք, սրչափ թովիչ մտգիչ ու պատրիչ հրա-
 պոյրներ ունիս. ս՛ աշխարհք, սրչափ շողորթ լեզու-
 ներ ունիս. ս՛, սրչափ սիրտեր ձեր անոյշ թոյներովը
 թմրեցուցած էք, զորոնք արթնցրնելը խիստ դժուար
 կ'երեւայ, թէպէտ աստուածային շնորհաց առջին քա-
 բերը կը կակղնան, ամուլները կը յղանան, Աբրահա-
 մին որդիք կ'երան, մինչև մեռեալք կը յառնեն:

Աս բնաւ յոյս չեմ կարեր, սիրելի եղբարք, սե-
 րը չէ՛ նե՛ գոնէ երկիւզը՝ մեր փրկութեանը երկրորդ
 ու ետքի առիթը կամ աղբարարը՝ ինձի պէս զձեզ ալ
 հեզ մը դրգէ, շարժէ, արթնցրնէ ու դարձրնէ Հը-
 ումայ եկեղեցւոյն, որուն գիմնը ու գ պէս գրկելու կը

ստիպուելք, ու գրկելնուդ պէս սիրելու կը սկսիք, ինչպէս որ ես ալ ժամէ ժամ ու վայրկեանէ վայրկեան աւելի կը սիրեմ. և զձեզ ալ սիրելուս համար՝ ետքի թռչող շունչերս ժողովուելով՝ ձեզի իմ կամքս ու սէրս յայանել ուղեցի. իմ ետքի մտածութիւններս, խորհրդածութիւններս, իմ ետքի հաստատուն միտքս անջինջ կտակի մը պէս ձեզի ձգել ուղեցի: Եթէ դուք ալ զիս կը սիրեք նե՛ հեղ մը ինձի նմանեցէք, սիրելին սիրելոյն նմանելու չե՞ մի. մտքով մահերնիդ աչքերնուդ առջին բերեք, երեւակայութեամբ մահուան անկողնի մը մէջ պառկեցէք. այն ետքի զարհուրելի ու անաչառ վայրկեանը մտածելով՝ երկրի, մարմնից ու մարդկանց հետ յարաբերութիւննիդ վայրկեան մը դադրեցուցէք. դուք ձեր անձին, ձեր եսին, ձեր խղճմտանքին, ձեր գիտակցութեանը հետ խորհրդակցելու սկսեցէք, վերջապէս անշահասէր, անկեղծ ու բարեմիտ ոգւով ճշմարտութիւնը փնտռելու ելէք, Խնդրեցէք, Բախեցէք, Քննեցէք, Համեմատեցէք, Տրամաբանեցէք, Փիլիսոփայեցէք, Աստուածաբանեցէք, Մարդարեայեցէք:

Սակայն հիմա լսեցէք, եղբարք, լսեցէք ճշմարտախօս ու անկեղծ եղբօր մը՝ և մահուան դուռը հասնող ու մէկ ստոր աշխարհքին ու մէկալը յաւիտենա կանութեան սեամին վրայ դրած եղբօր մը յորդորանքները, (որովհետեւ չեմ կրնար հրամայել, չեմ կրնար ձեր վրայ իշխել) աղաչելով պաղատելով կը յորդորեմ զձեզ որ դուք ալ դառնաք այն միութեան փառախը՝ որուն մէջ կը գտնուէր նաև մեր Առսաւորիչ հայրը, խառնուելք կաթողիկէ հօտին մէջ՝ որուն մէջն էին երբեմն մեր նախնիներն ալ, ճանչնաք այն պետրոսեան հովիւին ցուպը՝ որուն կը հպատակէին նաև գրիգորեան ցուպերը, լսէք այն ճշմարիտ ուղղավառ հռոմէական վարդապետութեան ձայնը՝ որուն երբեմն հաղորդակից էին մեր սուրբ հայրապետները, որոնք իրենց ջանք Հռոմայի հնոցէն վառելով ճշմարիտ Առ-

ուսուցիչը ու Առասուրիչք էին, վերջապէս կը յոր
 գորեմ զձեզ որ սցոպէս միացեալ և լուսաւորեալ
 հանգչիք այն փրկարար եկեղեցւոյն ծոցը, որուն մէջ
 մեր բալանդակ սուրբերն ու որբուհիներն ալ կը հանդ-
 շին: Անշուշտ հոս հիմա ձեզմէ զո՛հ մըն ալ կը պա-
 հանջուի, և զոհին ցաւն ալ զգալի է. ո՞ր վարձքն է
 որ առանց զոհի կը մտածուի: Արքեպոս, շահերը, նը-
 կատմունքները, սնննասիրութիւնները պիտի զոհուին՝
 որ ճշմարտութիւնը ձեզի հետ հաշտուի և զձեզ իրեն
 փեայ առնու: Գիտէք արդէն որ իմ կենացս մէջ
 ՄԻՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՍԵՐԸ իմ ամենասիրելի գաղափարներս
 էին. բայց հիմա իմացայ թէ ո՞րն է ասոնց կերպը և
 ո՞ւր է ասոնց հնոցը. դուք ալ սիղէ ձանչցէք նոյն կերպն
 ու նոյն հնոցը:

Այն գանդաղիք, եղբարք, մահը գողի պէս կը մօ-
 տենայ, ինչպէս ինձի նոյնպէս ձեզի. ալ իմ խիղճս
 հանգիստ է. ես իմ պարտքս կը յուսամ թէ կատա-
 րելի. պարտք մըն ալ ունէի ձեզի բարի օրինակ և շե-
 նութիւն ապաւ. ահա ես իմ ձեռքէս եկածը ըրի,
 ախանջ ունեցողը թող լսէ, աչք ունեցողը թող տես-
 նայ, միտք ունեցողը թող իմանայ. աս ալ կ'աղաչեմ
 որ ներեն ինձի անոնք որոնք իզմէ գայթակղութիւն
 մը առած, իզմէ անիրաւուած են նէ՛ լսելով իմ դաւ-
 թեան հեծութիւններս,

“Օրերս շուքի պէս անցան և ես խոտի մը պէս
 թոռմեցայ. արդէն իննալու վրայ էի և թշնամի ուս-
 քեր պատրաստուած էին վրաս կոխելու. քանի որ ան-
 ցեալ կեանքս ու գալի մահը կը մտմտայի ոսկորներս
 խալի պէս իրար կ'անցնէին, բալանդակ անդամներս
 կը սարսէին, կարծես թէ օձ մը սրախ չորս դին պա-
 տած երթալով գալարելու՝ երթալով սիրտս ճնշելու
 վրայ էր, բերանս լեղի դարձած, աչքներս արտաս-
 ուաց երկու աղբիւրներ եղած, լեղուս ալ բռնուած,
 ձայնս ալ հասնելու վրայ էր. . . : Յետին ջանք մ'ալ
 ընելով երկիւղալից աչքներս հեղ մը երկինք վերցու-

ցի . խիտ սու խիտ ամպերու կուտակներուն մէջէն յաւ-
 ւիտեհական գթութեան ու ողորմութեան ցորցեալ
 մէկ ճառագայթին հանդիպեցայ . Ախ Տէր իմ , ըսի ,
 զմեզս մանկութեան և զանգիտութեան իմոյ մի յի-
 շեր . զիս ինձի դարձուր , քու ճամբող ցուցուր ին-
 ծի , բայց ամենէն աւելի ներէ ինձի . քեզի շատ դէմ
 կեցայ , գիտեմ . քեզի հետ շատ կուտեցայ , գիտեմ .
 բայց հիմա . . . ո՛հ , լեզուս յառաջ չ'երթար , հիմա
 կ'ուզեմ . . . կ'ուզեմ հաշտուիլ . հաշտութիւն հաշ-
 տութիւն ըսելով դառնութեան արեաց մէջ ընկզմե-
 ցայ մնացի : Ահա երկնային կապարձակիր հրեշտակի մը
 արեզէն նետ մը շառագէտով թռաւ ու իմ սիրտս վե-
 րաւորեց , թէ թոյն թէ պարամ մէկտեղ թափեց , թէ
 ցաւուց և թէ ուրախացուց . դառն անուշութիւն
 մը և անսլշ դառնութիւն մը քիմքս պատեց , դեր-
 բնական զգածմունք մը զիս պաշարեց , աստուածային
 բան մը սրտիս կը զարնէր , սիրտս կ'ուզէր պահւելով
 կամ դռնէ ինք զինք ծածկել , կը տարակուսէի թէ ար-
 դեօք Աստուած մը ասանկ սրտի մը վշարից պարտեզին
 ալ այց ելեր է . Աստուած մը ինձի հետ հաշտուիլ
 կ'ուզէ . ես ո՛վ եմ , հող ու մոխիր , հողի մը սրդ , ու
 սրդի մը ճարակ , Աստուած մը մարդուն հետ ի՛նչ յա-
 րաբերութիւն ունի . դառն սրտի մը հետ անսլշ Աստ-
 ուած մը ի՛նչ գործք ունի . կը սխալեմ կը սխալեմ կոր ,
 ո՛հ , կարծես թէ որչափ որ դառնութիւնս կ'աւելնար ,
 որչափ որ կը քաշուէի ու Աստուծմէ խուսափելու
 ջանք մը կ'ընէի նէ , այնչափ անիկա ինձի կը մօտենար
 ու կը քաղցրանար . ես դառնագառն ցաւերու մէջ ըն-
 կրդմած և գրեթէ յուսահատութեան սահմաններուն
 կոխած և գրեթէ յուսահատցընելու չափ ալ իմ աստ-
 ուածային Սիրելիս ու Տէրս վշտացուցած էի : Դեռ
 թմրութեան մը մէջ էի , դեռ միրկալից արկըններէն վեր
 գլուխս չէի կրցեր հանել և դէպ ի վեր խրկած զըզ-
 ջու մներս ու յառաջագրութիւններս ամպերը պատ-
 ուած երկինք չէին հասած , . . . յանկարծ մէկէն ար-

Թընցայ, աչըններս բայի, ահա, ահա երկնային սի-
րոյ արեւը յտակ եթերի մը մէջ աստուածային թա-
գուհւոյ մը պէս ճեմելու սիսեր էր, և արդէն իր
քաղցրահայեաց նայուածքը վրաս ձգեր էր. ո՛ր Սէր իմ
և Աստուած իմ՝ ըսելու չմնայ՝ իր բանաբ պատուող
ու աւարը ձգող Թիթուան մը նման սրտիս բեռերն
ու կեղեւները ձգելով սիսայ զորանալ, վերանալ, թըռ-
չիլ, լուսաւոր օգերու մէջ լողալ, զուարթ ճառա-
գայթներու վրայ զմայլիլ, քաղցր զեփուաներու հետ
յնծալ ու խոյտալ: Ահա մրտենւոյ անառնները ին-
ծի կը բացուին և իրենց զուարթ տերեւները խնտա-
լով զիս կը հրաւիրեն. հարուստ պարտեզներ բուրաս-
տաններ զիս իրենց հարս առնուլ կ'ուզեն, անուշահոտ
ճաղիկներ իրենց ծոցը կը բանան՝ որ ուզածիս չափ
մեղր քաղեմ. լուրջ ու յտակ վտակներ ինծի կը ծի-
ծաղին. կանանչազարդ դաշտերու, գեղեցիկ բլուրնե-
րու վրայ կ'իջնամ կ'ելլեմ. ստուգիւ սիրտս ազամեան
դրախտի մը մէջ անմեղու թեամբ կը թռչտի ու խա-
ղաղու թեամբ կը հանգչի: Այ՛ն Տէր իմ և Աստուած
իմ, բու եկեղեցիդ ինծի երկրորդ դրախտ մբն է, որն
որ նաև երկնաւոր դրախտին նախանկար մէկ օրինակն
է. . . Ալ ասկէ աւելի ի՞նչ լսեմ. բայց սիրտս միշտ
կը խօսի՝ Թէպէտ լեզուս խօսելու ուժ ու ատեն չու-
նենայ. ՅԵԿԵՆՅԻՍ ՄԵԾՍ օրհնեցից զբեզ, օրհնեցից
զբեզ յաւիտեան: Գ. . .

Եղբարք իմ աղգակից, սլ ատենս կարճ է, բիչ
խօսքէն դուք շատ հասկըցէք: Ահա իմ ետքի վայր-
կեանս հնչելու վրայ է. ահա իմ աչացս ետքի կաթիլն
ալ, սիրելի եղբարք, ձեր վրայ թափելու ատենս՝ կը
յուսամ որ սլ ետքի կաթիլը կ'ըլլայ այն արցունքնե-
րուն հեղեղին՝ զորն որ իմ Հայաստանիս իմ սիրելի
Հայաստանիս վրայ իջեցուցի, կը յուսամ որ ետքի
չունչիս հետ ողբերս ալ կը դադրին: Սակայն թող այն
երկրպառակ ձայներն ալ դադրին՝ որոնք Հայաստանս
Հռոմէն կը հեռացընեն, դադրին այն անդու թէ՛ ողբու-



ներուն պատրիչ ձայնը՝ որոնք Լուսաւորչին ոչխարները արեւմուտքի ճարակաշատ գաշտերէն՝ արեւելքի չոր անապատներուն մէջ կը հրապուրեն կը կանչեն . դադրին վերջապէս այն ամէն թովիչ ու գիւթիչ հնչունները՝ որոնք իմ Հայաստանիս ոգին թմրեցընելով՝ ահոր մարմնոյն մագնիսական կամ ելեքտրական շարժումներ տալով՝ աշխարհքը կը խաբեն թէ կենդանի է , ողջ է Հայաստան , և այլն :

Ո՛ր ճշմարիտ հովիւք , ա՛յլ առենը եկած է , ա՛ղէ , ելէք , առաջնորդեցէք իմ Հայաստանիս՝ անմոլար ճամբով ու երկնային լուսով . ս՛ ուղղափառ վարդապետք , լուսաւորեցէք իմ Հայաստանս՝ ճշմարիտ կաթողիկէ վարդապետութեան ջահով . ս՛ գթասիրտ և մխիթարիչ հարք , խրատեցէք , ուսուցէք իմ Հայաստանս՝ սիրալիր խրատներու և առաքելական օրինակներու աւսրացոյցերով . ս՛ իմաստուն հօգեւոր բժիշկներ , կապեցէք , գոցեցէք , անցուցէք իմ Հայաստանիս վէրքերն ու ախտերը՝ ճարտար ձեռքերու և հանձարեղ դարմաններու օգնականութեամբ . ս՛ հօգեւոր դատաւորք , չափեցէք , կշռեցէք , քննեցէք , ճանչցէք ու որոշեցէք իմ Հայաստանիս վիճակը՝ արդար քննութեան և անսրիալ բանաւորութեան ձեռօք , և ինք զինքն ալ իրեն ճանչցուցէք՝ այս ամենամեծ սկզբամբ՝ ճանիր ըզքեզ . վերջապէս ս՛ զգայուն սիրտեր , դուք ալ գոնէ սիրոյ արցունքներ թափելով մխիթարեցէք իմ Հայաստանս և ինձի հետ ողբակից ու ցաւակից եղէք : Ո՛ Հայաստան , զքեզ սիրելուս համար զքեզ կ'ողբամ ու արցունք կը թափեմ և վրադ ուրիշին ալ ողբ ու արցունք թափել կու տամ . զքեզ սիրելուս համարքու վէրքերդ կը բանամ , ախտերդ կը յայանեմ , զքեզ կը խրատեմ ու առջեւդ բացուած անդունդները յառաջընէ քեզի կը ցուցընեմ . և ասոնցմէ սոսկալուստունս՝ դարձեալ չեմ դադրիր զքեզ սիրելէն :

Ո՛ մանկունք Հայաստանի , յոյս աւելի ձեր վրան է , ձեզմէ մխիթարուելու յոյս չառ է , ս՛ը էր որ

ծծած կաթերնուդ հետ ուղղափառ կաթողիկէ ոգին ալ մէկտեղ ծծեիք : Դուք ալ ո՛ր Լուսաւորչայ անուամբ պարծող հարք ու մարք, ցուցուցէք ձեր լուսաւորութիւնը, և միսթարեցէք զիս ու ձեր նախնիքը՝ ձեր զաւկընները ճշմարիտ ու մի միայն կաթողիկէ ուղղափառ և աստուածային կրօնին մէջ դաստիարակել տալով, որպէս զի կարող ըլլան ճշմարիտ Լուսաւորչական անուանուիլ : Դարձեալ կ'ըսեմ, ո՛ր Հայաստան, զքեզ սիրելու համար քու դարձդ ու քու վերանորոգութիւնդ կը բաղձամ. և թէպէտ միշտ զքեզ կը սիրելի, բայց հիմա աւելի կը սիրեմ և տարբեր եղանակաւ կը սիրեմ. այսպէս կը սիրեմ զքեզ, կը սիրեմ իմ ազգս, կը սիրեմ զմարդիկ, կը սիրեմ ժամանակաւորը, բայց պէտք է որ ճշմարտութիւնը, կրօնը, յաւիտենականը, աստուածայինը աւելի սիրեմ ու սիրցընեմ :

Ա՛խ, Հայաստան, Հայաստան, զարթիր, ել, մի խուսափեր, եկուր բազկացս մէջ, աչուըններս չգոցած հեղ մ'ալ կ'ուզեմ զքեզ գրկել ու սրտիս վրայ սխմելով երգւընցընել որ զիս յաւիտեան սիրես ու իմ բաղձանքներս կատարես, իմ կտակս նուիրական սեպես, իմ ետքի կամքս քու կամքիդ հետ միացընես, իմ արցունքներս սրբես, իմ ետքի շունչիս հետ քու շունչդ ալ խառնես միացընես և կանչես . ԵՍ ԱՆ ԻՄ ՍԻՐԵԼԻ ՏԱՏԵԱՆԻՍ ՀԵՏ ԾՇՄԱՐԻՏ ՈՒՂԱՒՓԱՌ ԿԱԹՈՂԻԿԷ ՀՈՒՈՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՏԻՈՅՆ ՈՐԴԻՆ ԵՄ : Ո՛ւր էր ո՛ւր էր որ լռելի ու հիմալւընէ լռելի աս քու ձայնդ՝ որ սիրտս հանգչէր, միտքս վերանար և աչքերս ետքի խնտու մով մը գոցելի :

Ա՛հա ես կը մեռնիմ, սիրելի եղբարք, և զձեզ իմ սիրած Մօրս յանձնելու ատեն՝ յաւիտենականութեան մէջ կը սպասեմ և զձեզ դարձեալ գրկելու և ողջադուրելու և մէկտեղ յաւիտեան երջանիկ ըլլալու յուսով կը մնամ . . .

« Ազգային գրադարան



NL0251052

